

Հայաստան. Հանուն անվտանգ և բարգավաճ Հարավային Կովկասի  
ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը  
Գերմանիայի Կոնրադ Ադենաուեր հիմնադրամում  
(22 հունիսի 2010թ.)

Հարգարժան նախագահող,

Հարգելի՛ ներկաներ,

Տիկնայք և պարոնայք,

Շնորհակալ եմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության առաջին կանցլերի անունը կրող այս հեղինակավոր հիմնադրամում ելույթ ունենալու հնարավորության համար և ողջունում եմ այսօրվա հանդիպման բոլոր մասնակիցներին, նաև հիմնադրամի ղեկավարությանը, մասնավորապես պարոն Փոթերինգին, ում հետ համատեղ աշխատանքի առիթ եմ ունեցել: Ուրախ եմ, պարոն Փոթերինգ, կրկին հանդիպելու և մեր տարածաշրջանի հանդեպ Ձեր մշտական ուշադրության համար: Կոնրադ Ադենաուերի տեսլականը, որով կանխորոշվեց հետպատերազմյան Գերմանիայի քաղաքական կողմնորոշումը և հնարավոր դարձավ Եվրոպայի միասնականության գաղափարի իրականացումը, քաղաքական խոհեմության փայլուն օրինակ է, որի արդիականությունը չի նվազել անգամ այսօր՝ տասնամյակներ անց:

Հարգելի ներկաներ,

Այսօր ես խոսելու եմ Հարավային Կովկասի մասին, նրա դերի, կարևորության, նրա ներկայի և, որ ավելի կարևոր է, նրա ապագայի մասին: Ինչպես ասես մեր տարածաշրջանը չի բնորոշվել՝ Ասիան Եվրոպային կապող կամուրջ, էներգետիկ անվտանգության ապահովման հանգույց, կայունության կամ անկայունության գործոն, հաղորդակցության ուղիների տարանցիկ գոտի, ուժերի մրցակցության կամ շահերի համադրման թատերաբեմ. այս ցանկը կարելի է անվերջ շարունակել: Բոլոր այս բնորոշումները սառն են, անհաղորդ և անտարբերությամբ լի, քանի որ դրանցում չեն երևում, պարզապես բացակայում են տարածաշրջանի բնակիչները, ժողովուրդները՝ որպես հավաքական ինքնության և մշակույթի կրողներ, և այդտեղ ապրող ժողովուրդների միջև եղած տարբերությունները, նրանց զարգացման ուղղվածությունն ու միտումները:

Ավելին ասեմ. նման բնորոշումներով ուղղորդված ընկալումները խանգարում են նաև մեզ և նպաստում, որ, ինչպես Կոնրադ Ադենաուերն էր ասում, “լինելով մեկ արևի տակ՝ չունենանք ընդհանուր հորիզոն”:

Անշուշտ, շատ չեն աշխարհում տարածքները, որտեղ ժողովուրդների, էթնիկական խմբերի, մշակութային, կրոնական, քաղաքակրթական նման բազմազանություն կա: Սակայն հենց սա է մեր իրական հարստությունը: Մենք պետք է կարողանանք բարձրանալ և առաջ շարժվել ոչ թե այս բազմազանությանը դեմ գնալով կամ մեկս մյուսի ունեցածը մերժելով, այլ միմյանց լրացնելով, փոխհարստացնելով, ինչպես արել և անում են եվրոպական այլ երկրներ:

Ավելի քան 3000 կմ երկարությամբ միջազգային սահման կա Կովկասում, և ես ցավով եմ արձանագրում, որ այս սահմաններն ավելի շատ բաժանում, քան միավորում են մեզ: Այո՛, շատ չեն նաև աշխարհում տարածաշրջանները, որտեղ բնակվողները նմանատիպ պատմական խնդիրներ, ցավ և անգամ թշնամանք ունեն միմյանց հանդեպ: Սակայն այստեղ էլ արդիական է Կոնրադ Ադենաուերի օրինակը. ժամանակին նա տեսավ ապագա Եվրոպան և ապագա Գերմանիայի տեղը այդ Եվրոպայում:

Յնարավոր է արդյոք նույնօրինակ ապագա մեր տարածաշրջանի համար: Անշուշտ հնարավոր է: Յնարավոր է միայն նպատակը գիտակցելու, այն միասնաբար շարադրելու, ճիշտ հրամցնելու, հանրնդհանուր ընկալելու և դեպի նպատակը շարժվելու ամուր կամքի, ավելի լայն ու հեռուն նայել կարողացող քաղաքական առաջնորդության պայմաններում: Բա՞րդ է հնչում. միգուցե: Բայց ոչ այստեղ՝ Եվրոպայում: Սա մի ճանապարհ է, որով անցնողների ձեռքբերումները բոլորիս աչքի առջև են: Այդ ձեռքբերումները ոգևորիչ են, իսկ անցումը՝ արժանի ընդօրինակման:

Սառը պատերազմի ավարտը աշխարհի բազմաթիվ կետերում կայունացում ու խաղաղություն բերեց: Բայց եղան նաև տարածքներ, որոնց թվում էր նաև Յարավային Կովկասը, որտեղ սառը պատերազմի ավարտով սկսվեց չափից ավելի թեժ հակամարտությունների ժամանակաշրջան: Նորանկախ երկրների պետական շինարարությունը զուգորդվեց պատերազմներով, հեղաշրջումներով, տնտեսական աղետալի ճգնաժամերով, հասարակությունները դարձան ռազմականացված, այլատյաց, անհանդուրժող ախոյաններ: Անցել է շուրջ երկու տասնամյակ: Արդյո՞ք անհրաժեշտ դասեր ենք քաղել մեր իսկ ոչ վաղ անցյալից: Ինչ դիտարկումների պատասխանը բացասական է:

Յետճգնաժամային հասարակություններում քաղաքական գործչի համար ամենահեշտ, գուցե ամենագայթակղիչ լուծումը ազգայնական քարտը խաղարկելն է: Պատերազմներից, ճգնաժամներից, տնտեսական անկումից դուրս եկող հասարակության համար դա կարող է ընկալվել որպես փրկարար փարոս. “Ես ձեզ կփրկեմ, որովհետև դուք իմ տեսակն եք”: Բայց սա խաբուսիկ լուծում է, գուցե ունակ ապահովելու

հասարակության ներքին ուժերի կարճատև համախմբումը: Բայց սա ապագային ուղղված լուծում չէ: Չի կարող լինել: Անհմաստ է վթարային շենքում փորձել վերանորոգել սեփական բնակարանը և հուսալ, որ ապահովել ես անվտանգությանդ խնդիրը: Առավել ևս չի կարելի սեփական անվտանգությունը կամ բարեկեցությունը կառուցել հարևանի հաշվին: Հարևանները նման քայլերը հեշտ չեն մոռանում: Դեպի հարևան շենք տանող մեկ-երկու խողովակը չի կարող ապահովել ո՛չ անվտանգությունդ, ո՛չ բարեկեցությունդ, առավել ևս՝ էականորեն մեծացնել բնակարանատերի նշանակությունն այլոց աչքում:

Մեր տարածաշրջանում մինչ օրս իրականացված ամենամեծ տնտեսական նախագիծը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղն էր, որը ոմանք կոչում էին “համաշխարհային նախագիծ”, “դարի նախագիծ” և այլն: Վրաստանում 2008թ. օգոստոսյան պատերազմի ընթացքում, երբ այդ նավթամուղի աշխատանքը դադարեցվեց, համաշխարհային նավթի գները տատանում չարձանագրեցին: Սա է ինձ համար այդ ծրագրի “համաշխարհային” լինել-չլինելու լավագույն գնահատականը: Իսկ ի՞նչ տվեց այդ ծրագիրը տարածաշրջանին: Բաժանարար գծերի խորացում, սպառազինությունների մրցավազք, ռազմական հռետորիկայի աճ... Սա՞ էր ակնկալվող “անվտանգությունն ու բարեկեցությունը”: Աստված մի արասցե, որ տարածաշրջանը ճաշակի այդ ծրագրի բոլոր /չակերտավոր/ “բարիքները”:

Այդ առումով կարևոր է, որ բոլոր հետագա ծրագրերն ու սցենարները բերեն հավասարակշռության ապահովմանը, ոչ թե հակադրությունների սրմանն ու ուժային լուծումների գայթակղության խորացմանը:

Երբեմն լսում եմ, ինչպես այս կամ այն ժողովրդի ներկայացուցիչը հպարտությամբ է ներկայացնում “քաղաքակրթությունների խաչմերուկում” իր ժողովրդի գտնվելու փաստը: Արդարության դեմ չմեղանչելու համար ասեմ, որ ես էլ եմ տարբեր առիթներով օգտագործել դա: Իսկապես, ես էլ եմ ներկայացուցիչը մի ժողովրդի, որն իր հազարամյակների գոյության ընթացքում մշտապես գտնվել է այդպիսի խաչմերուկում: Եվ ոչ միայն աշխարհագրորեն: Մենք եղել ենք կրոնների, կայսերական նկրտումների, լեզվախմբերի, աշխարհընկալումների, իսկ 20-րդ դարի ընթացքում՝ նաև գաղափարախոսությունների խաչմերուկում: Այդ հանգամանքը նպաստել է մեր ժողովրդի զարգացմանը հոգեպես, մշակութապես: Սակայն այն նաև իմ ժողովրդի համար սոսկալի աղետների պատճառ է դարձել: “Խաչմերուկում” ապրող փոքր ժողովուրդները կհասկանան ինձ:

Մենք արագությամբ մտնում ենք պատմության մի փուլ, որը ենթադրում է բազմաբևեռ աշխարհ: Կարծում եմ, արդարացված են

մտավախությունները, որ Հյուսիս-Հարավ-Արևելք-Արևմուտք հակադրության սրացման նույնիսկ թույլ դրսևորումներն ունակ են ջլատելու մեր “խաչմերուկ”-տարածաշրջանը, իսկ կայունությունը կարող է պահպանվել այնքան ժամանակ, քանի դեռ չի հնչել առաջին կրակոցը: 2008թ. մեծ ճիգերի և զսպվածության շնորհիվ հաջողվեց խուսափել ռազմական առճակատման տարածումից: Երկրորդ անգամ նման հնարավորություն կարող է չտրվել: Ի վերջո, հարյուր տարի առաջ ո՞վ կարող էր ենթադրել, որ Ավստրիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը կարող է առիթ դառնալ 16 միլիոն մարդկանց սպանության, ևս 31 միլիոն մարդկանց դարձնելով հաշմանդամ:

Եթե կարող ենք ընտրություն կատարել մեր տարածաշրջանի վերաբերյալ քիչ առաջ նշված բնորոշումների միջև, ապա Հարավային Կովկասի ժողովուրդներն ունեն նման աղետալի սցենարներից զերծ մնալու միայն մեկ հնարավորություն՝ գիտակցել ու տեսնել ապագան՝ “ընդհանուր հորիզոնը”:

Տիկնա՛յք և պարոնա՛յք,

Համաշխարհային փորձի խտացումը վկայում է, որ մարդիկ ոչնչի շուրջ պատրաստ չեն ավելի արագ համաձայնության գալ, քան տնտեսական շահի շուրջ:

Բոլոր օրինակներն ապացուցում են տնտեսական համագործակցությամբ ինտեգրացման և քաղաքական խնդիրների լուծման երկարաժամկետ կայունությունը:

Հարավային Կովկասը կարող է համադրել բոլոր կողմերի՝ գործընկեր երկրների, տարածաշրջանային առաջնորդների, ներդրողների շահերը: Իրավիճակը, երբ բոլորը՝ գերտերությունները, տարածաշրջանային առաջատարներն ու շահագրգիռ մյուս կողմերը, հնարավորություն ունեն փոխլրացման ճանապարհով արդյունավետորեն բավարարել իրենց շահը, ունակ է հետ պահել ցանկացած մեկին ամեն ինչ խառնելու գայթակղությունից:

Ես հասկանում եմ, որ Իրանի նկատմամբ ընդունված պատժամիջոցների լույսի ներքո որոշ սկեպտիկներ թերահավատությամբ կվերաբերվեն իմ այս մոտեցմանը, բայց վստահ եմ, որ տարածաշրջանային լուծումներում չի կարելի և հնարավոր էլ չէ անտեսել Իրանը: Տարածաշրջանի համար խիստ կարևոր է Իրանի՝ վտանգված լինելու զգացման փարատումը: Առանց դրա չկա լուծում ո՛չ վաղվա խնդիրների, ո՛չ էլ նույնիսկ այսօրվա միջուկային խնդրի համար:

Իսկ արդյո՞ք հարավկովկասյան “տնտեսական կարկանդակը” կբավարարի բոլորին: Միգուցե փոքր կարկանդակի մասնատումը

շատերի ախորժակը չի կարող բավարարել, բայց ճիշտ լուծումը կարկանդակը մեկին կամ երկուսին հանձնելը չէ, առավել ևս, որ դրանով խնդիրները միայն սկսվում են: Ուղղակի անհրաժեշտ է թխել ավելի մեծ կարկանդակ:

Եթե խոսում ենք էներգետիկայի մասին, ուրեմն տարածաշրջանը էներգակիրների աղբյուրից պետք է վերածել էներգետիկ հանգույցի: Եթե խոսում ենք փակուղու և փակ սահմանների մասին, դրանց փոխարեն տարածաշրջանը պետք է դարձնել հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը կապող տրանսպորտային հանգույց: Անհրաժեշտ է բազմազանեցնել ծրագրերի ուղղվածությունը: Միայն արևելքից արևմուտք ձգվող նավթամուղներն ու գազամուղները, հաղորդակցության ուղիները չեն կարող ապահովել կայունություն, անվտանգություն և բարգավաճում տարածաշրջանում:

Վերջին տարիներին մենք նախաձեռնել ենք մի քանի խոշոր ծրագրեր:

Էական զարգացումներ ունենք էներգետիկայի ոլորտում: Ավարտելով նոր ջերմաէլեկտրակայանի կառուցումը և շարունակելով հնի շահագործումը՝ մենք ձեռնամուխ ենք եղել Հայաստանում ԱԷԿ-ի նոր, առավել հզոր բլոկի կառուցմանը: Արդյունքում մեր երկիրը կարող է դառնալ տարածաշրջանում էլեկտրաէներգիայի կարևոր մատակարար:

Մենք սկսում ենք նաև Վրաստանի նավահանգիստները Հայաստանի տարածքով Իրանի սահմանին կապող ժամանակակից արագընթաց ճանապարհի կառուցման աշխատանքները: Ծրագրում ենք նաև սկսել Հայաստան-Իրան երկաթուղու նախագծման աշխատանքները: Այս ենթակառուցվածքային ծրագրերն իսկապես հեղափոխական նշանակություն կարող են ունենալ տրանսպորտային հաղորդակցության առումով՝ Սև ծովը կապելով Պարսից ծոցին և Հնդկական օվկիանոսին, իսկ Իրանի միջոցով նաև Միջին Ասիային և ապագայում՝ մինչև Պակիստան ու Հնդկաստան:

Այս խոշոր ծրագրերի աջակիցներ ու հովանավորներ փնտրելիս մենք վերցրել ենք խիստ լայն սպեկտր՝ Վաշինգտոնից մինչև Մոսկվա, Բրյուսելից մինչև Պեկին ու Տոկիո: Եվ խնդիրը չի սահմանափակվում սոսկ պոտենցիալ ներդրողների որոնմամբ: Մեր պատկերացմամբ խնդիրն ավելի լայն է՝ ապահովել պոտենցիալ շահագրգիռ երկրների լայն ցանց և դրանով իսկ հնարավորինս լայն շահերի համադրում: Մենք իրապես կցանկանայինք տեսնել եվրոպական հսկաների՝ Գերմանիայի, Ֆրանսիայի ավելի մեծ ակտիվություն այս ուղղությամբ: Ի վերջո հարցն այն չէ՝ պատրաստ եք դուք ներդրում կատարել այս կամ այն ծրագրում: Հարցն ավելի լայնամասշտաբ է՝ պատրաստ եք դուք ներդրում կատարել տարածաշրջանի ապագայի համար:

Դիտարկելով խնդիրը զուտ տնտեսական շահավետության տեսակետից, մենք անտեսում ենք ամենակարևոր բաղադրիչը՝ անվտանգության և համաչափ զարգացման մակարդակի էական բարձրացումը: Ի վերջո, պնդումը, թե տարածաշրջանի ներքին խնդիրները լուրջ տարածաշրջանի ներքին խնդիրներն են և անհրաժեշտության դեպքում դրանք կարելի է սառեցնել տարածաշրջանային մակարդակով, դեռևս ապացուցման կարիք ունի:

Ուզում են նաև հակադարձել տարածված այն տեսակետ-մոտեցմանը, ըստ որի սկզբում անհրաժեշտ է հասնել ընդհանուր քաղաքական լուծման, որից հետո կարելի է համաձայնությունը “յուղել” տնտեսական առատ աջակցությամբ: Խիստ կասկածներ ունեն մեր տարածաշրջանում նման մոտեցման կենսունակության վերաբերյալ: Նման մոտեցումն աշխատում է այն իրավիճակներում, երբ հստակորեն առկա է պայմանավորվածության կատարման “պարտադրող կողմը”, ում լիազորությունները չեն վիճարկվում և չեն վիճարկվելու որևէ մեկի կողմից: Այդ մոտեցումը աշխատում է Բալկաններում, բայց “պարտադրող կողմի” բացակայության պայմաններում չի աշխատել բազում այլ վայրերում, ամենավառ օրինակը Պաղեստինն է:

Ինչևէ, մոտ ապագայում մեր տարածաշրջանում քաղաքական համապարփակ լուծումների կայացումը համարում են քիչ հավանական, իսկ տարածաշրջանային տնտեսական համագործակցության աշխուժացումն ինքը կստիպի վերանայել փակ սահմանների և սառած հարաբերությունների առկա ստատուսքվոն և հակամարտությունների լուծման համար փոխվստահության մթնոլորտ կծնավորի:

Ուզում են մի փոքր շեղում կատարել՝ խոսելով Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման մեր նախաձեռնության հետևանքով տեղի ունեցած զարգացումների փորձառության մասին: Այն մտահոգությունները, որ այսօր ես հնչեցնում են տարածաշրջանի անվտանգության խնդիրների առումով, մեծապես առաջնորդում էին մեզ նաև Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման նախաձեռնությունը հռչակելիս: Դա և՛ տարածաշրջանային ընդհանուր ապագայի մասին մտահոգությունն էր, և՛ բաժանարար գծերի վերացումն ու երկխոսության մթնոլորտի հաստատումը, և՛ տնտեսական համագործակցության խթանումը՝ որպես նաև հետագայում քաղաքական խնդիրների լուծման համար բարենպաստ դաշտի ստեղծման գրավական: Ինչու՞ մեր նախաձեռնությունը չպսակվեց հաջողությամբ: Թուրքիան հետ կանգնեց իր ստանձնած պարտավորություններից և ոչ միայն չվավերացրեց ստորագրված արձանագրությունները, այլև վերադարձավ գործընթացից առաջ որդեգրած իր հին դիրքերին. նախապայմանների, թելադրանքի և անգամ սպառնալիքների լեզվին:

Մինչև օրս էլ Եվրոպայի միակ փակ, հայ-թուրքական սահմանը մնում է այդպիսին:

Անշուշտ, թուրքական կողմից Հայաստան-Թուրքիա կարգավորման տապալումը կարող է բացատրվել քաղաքական դեկավարության անկարողությամբ կամ չկանոնությամբ, միգուցե նաև այլևայլ հաշվարկներ ունենալու հանգամանքով. մի քանի վերլուծաբաններ թերևս ավելացնեն նաև ադրբեջանական ճնշման գործոնը: Որոշ արևմտյան վերլուծաբաններ ինձ փորձում էին հանոզել, որ սա ժամանակավոր երևույթ է, ներքին ընտրական գործընթացների սպառման համար: Միգուցե, ժամանակը ցույց կտա: Ավելի խորքային վերլուծությունը բերում է մեկ եզրակացության՝ մեր տարածաշրջանում դեռևս խորապես առկա են դիմացինի հաշվին խնդիրները լուծելու, “ես ուժեղ եմ, հետևաբար ես եմ թելադրելու լուծումները” մոտեցումները: “Հարևանների հետ զրոյական խնդիրների քաղաքականությունը” զրոյական արդյունքներ է տալիս: Եվ այդպես կլինի այնքան ժամանակ, որքան Թուրքիան շարունակի իր շահը փնտրել մեր տարածաշրջանում շահերի բախման, այլ ոչ թե համադրման համատեքստում:

Իմ խորին համոզմամբ ժամանակն է, որպեսզի տարածաշրջանի առաջնորդները վեր կանգնեն նեղ քաղաքական օրակարգերից ու հակասություններից, ի ցույց դնելով իսկական առաջնորդական հատկանիշներ՝ ուղղված ապագայի կերտմանը, այլ ոչ անցյալը վերապրելուն: Հուսով եմ՝ նման փոփոխություններ կարող ենք տեսնել առաջնորդների հենց այս սերնդի մոտ:

Հայաստանը բազմիցս կոչ է արել իր արևելյան հարևանին՝ Ադրբեջանին, մեր երկրների հնարավորություններն ի սպաս դնել տարածաշրջանի կայունացմանն ու զարգացմանը: Սպառազինությունների մրցավազքն ու ռազմատենչ հայտարարությունները մեր երեխաներին չեն կարող լավ ապագա խոստանալ: Եվ ես դա ասում եմ որպես մի մարդ, ով անցել է իրեն պարտադրված պատերազմի բովով, ճաշակել հաղթանակի բերկրանքը, բայց և երբեք չի մոռանա պատերազմի պատճառած դառնությունները: Ի վերջո, մի օր, երբ տարածաշրջանում սկսվեն տնտեսական ինտեգրացիոն գործընթացները, մենք իսկապես կարող ենք շատ ավելի հեշտությամբ լուծել դարաբաղյան հիմնախնդիրն ու ապահովել մեր ժողովուրդների ապահով, անվտանգ և բարեկեցիկ գոյությունը, քան այսօրվա անվստահության և կասկածանքի մթնոլորտում: Համոզված եմ, որ տարածաշրջանային ինտեգրացիայի մեր մոտեցումները կիսում են նաև Վրաստանի մեր գործընկերները:

Մենք իրավունք ունենք նաև նման վերաբերմունք ակնկալել տարածաշրջանում ներգրավված մեր գործընկերներից: Մենք անընդհատ

խոսում ենք ինտեգրացիան և փոխկապակցվածությունը խթանելու մասին, բայց ի՞նչ քայլեր ենք անում:

Նույնիսկ Եվրամիության Արևելյան գործընկերության շրջանակներում մենք հանգիստ նայում ենք, թե ինչպես ծրագրին միացած որոշ երկրներ փորձում են սահմանափակել տարածաշրջանային համագործակցության հնարավորությունները: Օրինակ Ադրբեյջանը, ոգևորվելով երկար տարիներ ՏՐԱՍԵԿԱ ծրագրին Հայաստանի մասնակցությունը սահմանափակելու իր ջանքերից, փորձում է նույն գործելաոճը տարածել նաև Արևելյան գործընկերության վրա:

Հարգելի՛ բարեկամներ,

Ամփոփելով խոսքս՝ ցանկանում եմ ընդգծել, որ Հայաստանը հավատարիմ է ժողովրդավարական արժեքների վրա հիմնված քաղաքացիական հասարակություն կառուցելու նպատակին և հանձնառու է ստեղծել տարածաշրջանում փոխադարձ շահերով ու պարտավորություններով ամրագրված կայունության, անվտանգության, համերաշխության և տնտեսական զարգացման միջավայր:

Ինչպես Մարտին Լյութերն էր ասում. “Ամեն ինչ աշխարհում հույսով է արվում”: Ես հույս ունեմ, որ մի օր մեր հարևանների և բարեկամների հետ իրական ու գործնական երկխոսություն կսկսենք՝ մեկ սեղանի շուրջ հավաքելով բոլորին. դա է պահանջում “ընդհանուր հորիզոնի տրամաբանությունը”: Եւ վստահ եմ, որ գալու է այն օրը, երբ այն հարցադրմանը, թե “հնարավո՞ր է դա մեր տարածաշրջանում”, կլսենք հստակ պատասխան՝ այո՛:

Շնորհակալություն ուշադրության համար:-0-